

Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով անտառային ծածկույթի հատմամբ անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման ծրագրի շրջանակներում անտառապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի պայմանները, հայտի ձևը, հայտին կից ներկայացվելիք փաստաթղթերի ցանկը, անտառապատմանը ներկայացվող պահանջները և Հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման չափանիշները

1. Մրցույթին մասնակցելու հայտի հետ միասին մասնակիցը պետք է ներկայացնի՝

1) մասնակցի պետական գրանցման վկայականի, ներառյալ բոլոր ներդիրների պատճենները.

2) 2008-2010 թվականների ընթացքում համանման ծառայությունների մատուցման պայմանագրերի և կատարողական փաստաթղթերի պատճենները.

3) հարկային մարմին ներկայացրած և վերջինիս կողմից ընդունված 2010 թվականի ֆինանսական հաշվետվության պատճենը՝ հաստատված հարկային մարմնի կողմից կլոր (բնօրինակ) կնիքով.

4) տեղեկանք հաստատված հայտատուի գործադիր մարմնի ղեկավարի կողմից՝ տեխնիկական միջոցներով և մասնագետներով հազեցվածության մասին.

5) տեղեկանք հաստատված հայտատուի գործադիր մարմնի ղեկավարի կողմից՝ համապատասխան (անտառապատման և անտառի խնամք իրականացնելու) ոլորտում փորձառության մասին.

6) տեղեկանք համապատասխան դատարանից՝ անվճարունակ ճանաչված չլինելու մասին:

2. Անտառապատմանը ներկայացվող պահանջներն են՝

1) Անտառապատումը պետք է իրականացվի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մրջուտ և Օձուն համայնքներին պատկանող հողերում շուրջ 80 հեկտար հողատարածքի անտառապատում» աշխատանքային նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) սահմանված տարածքներում.

2) Անտառապատումը պետք է իրականացվի Նախագծով սահմանված կարգով ու պայմաններով:

3. Մրցույթին ներկայացված հայտերի գնահատման նպատակով հանձնաժողովը հիմք պետք է ընդունի՝

1) հայտի համապատասխանությունը մրցույթի պայմաններին.

2) հայտում ներկայացված տվյալների արժանահավատությունը.

3) հայտով ներկայացված գնային առաջարկը (անտառապատվող տարածքի յուրաքանչյուր հեկտարի համար գինը, ներառյալ մինչև անտառի շարք տեղափոխելը խնամքի աշխատանքները): Այն դեպքում, երբ հայտատուն առաջարկություն ներկայացրել է երկու լոտերի համար, սակայն լոտերից միայն մեկի մասով հաղթող ճանաչվելու դեպքում հնարավոր է աշխատանքների ծավալի փոփոխությամբ պայմանավորված գնային առաջարկի փոփոխություն, հայտում պետք է նշվի այդ փոփոխության կոնկրետ չափը:

